# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 1

## ՀՀ ԱՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-Ի ԵՎ «ԴԻ ԱՐՏ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԾՁԲ-2026/14-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «____» հունիսի 2026թ.

ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Սահակ Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԴԻ ԱՐՏ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հենրի Հովակիմյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ,կնքեցին սույն համաձայնագիրը:

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը համաձայնեցին, որ Պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է ծառայությունների փաստացի մատուցումից և ընդունումից հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

1.2. Սույն համաձայնագրով ուժի մեջ են դրվում Պայմանագրով և դրա հավելվածներով նախատեսված ծառայությունների ամբողջ ծավալները:

1.3. Ծառայությունների մատուցումն իրականացվում է բացառապես Պատվիրատուի գրավոր կամ էլեկտրոնային պատվերի հիման վրա՝ ըստ Պատվիրատուի փաստացի կարիքների:

1.4. Առաջին պատվերի շրջանակում ծառայությունները մատուցվում են պատվերն ստանալուց հետո՝ մինչև 20 օրացուցային օրվա ընթացքում, իսկ հետագա յուրաքանչյուր պատվերի դեպքում՝ 3 օրացուցային օրվա ընթացքում:

1.5. Պատվիրատուն պարտավորություն չի ստանձնում պատվիրելու Պայմանագրով նախատեսված ծառայությունների ամբողջ ծավալը:

1.6. Պատվիրատուն պատասխանատվություն է կրում և վճարում է միայն փաստացի պատվիրված, մատուցված և ընդունված ծառայությունների դիմաց:
1.7. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտի դրությամբ չպատվիրված ծառայությունների մասով Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները դադարում են ինքնաբերաբար՝ առանց լրացուցիչ համաձայնագրի կնքման:
1.8. Չպատվիրված ծառայությունների ծավալները համարվում են ուժը կորցրած, և Կատարողը դրանց մասով որևէ պահանջ ներկայացնելու իրավունք չի ունենում:

**2. Այլ պայմաններ**

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:
2.2. Սույն համաձայնագրում չնշված պայմանները մնում են անփոփոխ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Ավան Վահան Տերյան 1-ին փողոց 13 շենք

ՀՎՀՀ՝ 05500411

Հ/Հ՝ 1570078724667200

Տնօրեն՝ Սահակ Հակոբյան ________________

Ստորագրող
ՍԱՀԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ
3711840906
2026-06-10 16:49:15 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԿԱՏԱՐՈՂ

«ԴԻ ԱՐՏ ՊՐԻՆՏ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Արագած, 8-րդ փողոց, տուն 10

ՀՎՀՀ՝ 05035685

Հ/Հ՝ 1570080616066100

Տնօրեն՝ Հենրի Հովակիմյան ________________________________

Ստորագրող
ՀԵՆՐԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
2605990559
2026-06-10 16:00:35 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից